189

2005 367

1. Սերը քննում են, սերը ճանաչում,
Սիրո մասին շատ են խոսում,
Բայց մարդիկ չգիտեն, թե որտեղից է
Սերը մեր սրտերում լցվում:
Սերը սպասում է, չի հպարտանում,
Սերը կյանք է տալիս մարդուն,
Սիրով են բոլորը շնչում ու ապրում,
Սիրով է փրկվում մեր հոգին:

2. Երբ սրտումդ հանգչում է սիրո կրակը,
Ուժ չունես վառելու արդեն,
Բայց Աստված տեսնում է սրտիդ փափագը,
Դու հիշի՛ր, որ Աստված սեր է:
Սերը պահպանում է, սերը ազատում,
Եվ սիրո կանչը հեռու չէ,
Նա ամեն վիճակի մեջ է այցելում,
Սրտում վառում կրակ սիրելի:

3. Միշտ պետք է հիշել Գողգոթայի մահը,
Երբ մեծ սիրով, հոժարությամբ
Քրիստոսը խաչի վրա զոհեց Իր կյանքը
Ի սեր աշխարհի մարդկության:
Սերը անսահման է, սերը չի չափվում,
Անհուն է սերը Հիսուսի,
Այնպիսի սեր է Քրիստոսը պարգևում,
Որ Նրանով աշխարհը փրկվի:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025